«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Առարկան՝ Շախմատ

Հետազոտող ուսուցիչ՝ Վիկտորյա Բունիաթյան

Ուսումնական հաստատություն Գավառ քաղաքի Պապին Ղանդիլյանի անվան համար 2 միջնակարգ դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....2

ԳԼՈՒԽ 1. ՈՒՍՈՒՑՉԻ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....5

1.1. Կրտսեր դպրոցական տարիքի առանձնահատկությունները սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հիմք.....5

1.2. Ուսուցչի և կրտսեր դպրոցական տարիքի սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիների հնարավոր համագործակցությունը.....9

ԳԼՈՒԽ 2. ՈՒՍՈՒՑՉԻ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ (ԿԱՄ ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ) ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ «ՇԱԽՄԱՏ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ.....12

2.1. «Շախմատ» առարկայի կարևորության գիտակցումը, դերը սովորողի կյանքում.....12

2.2. Ուսուցչի և սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիների համագործակցությունը «Շախմատ» առարկայի դասավանդման ընթացքում.....15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական թեմայի արդիականության հիմնավորում:

«Շախմատ» առարկան դպրոցական ծրագրում դասավանդվում է 2-4-րդ դասարաններում, որը համապատասխանում է կրտսեր դպրոցական տարիքին: «Շախմատ» առարկան դասավանդող ուսուցիչը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ համագործակցության է կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում, քանի որ արդեն 2-րդ դասարանում սովորողները հարմարվել են դպրոց հաճախելուն և այդ հարցում համագործակցության տարրը բացակայում է:

Ցավոք, հաճախ ծնողների կողմից թերագնահատվում է «Շախմատ» առարկայի կարևորությունը ուսումնական առարկաների թվում, իսկ այն կարևոր նշանակություն ունի անհատի ձևավորման գործում և այդ կարևոր նշանակությունը պետք է «հասցնել» ծնողներին: Սովորողների կրթության կազմակերպման համատեքստում «Շախմատ» առարկայի ուսուցչի և ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների համագործակցության հենքն առաջին հերթին ծնողների մոտ «Շախմատ» առարկայի վերաբերյալ այն հիմնավոր կարծիքի ձևավորումն է, որ «Շախմատ» առարկան ազդում է սովորողների հոգեկան որակների ձևավորման վրա՝ ստեղծելով սովորողի ճանաչողական և հոգեբանական զարգացման հիանալի հնարավորություններ:

Ընտանեկան դաստիարակության համատեքստում «Շախմատ» առարկայի ուսուցչի և ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների համագործակցության շրջանակն ավելի լայն է: Առաջին հերթին, ուսուցիչը պետք է հիմնաքարային դարձնի այն միտքը, որ շախմատը ռազմական խաղ է: Հնարավոր է, որ ծնողների կողմից սա միանշանակ չընդունվի, սակայն պետք է հասնել այն գաղափարին, որ դպրոցը կերտում է ապագա զինվորի, հայրենյաց պաշտպանի, ով կրում է դպրոցի ներդրած արժանիքները և ընտանեկան դաստիարակության սերմերը: «Շախմատ» առարկան ձևավորում է ինքնուրույն, կամային որակներով աչքի ընկնող անհատի, իսկ ռազմահայրենասիրական ուղղորդվածություն ունեցող ընտանեկան դաստիարակության զուգորդմամբ առարկայի դասավանդումն առավել ցցուն արդյունքներ կապահովի:

Ընտանեկան դաստիարակության համատեքստում «Շախմատ» առարկայի ուսուցչի և ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների համագործակցության շրջանակում կարող ենք ներառել նաև սովորողների՝ հասարակության մեջ ունենալիք վարքի ձևավորումը, բարոյական արժեքների պահպանումը, խնդրահարույց

իրավիճակներում կառուցողական լուծումներ գտնելու կարողունակության ձևավորումը և այլն:

Բացի վերը նշված կարևոր դրույթները, թեմայի արդիականությունը հիմնավորվում է նաև նրանով, որ թե՛ ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպումը, թե՛ ընտանեկան դաստիարակության արդյունավետության բարձրացումը հնարավոր է ուսուցչի և սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ այնպիսի համագործակցության արդյունքում, որի պայմանում հնարավոր կլինի դասավանդման գործընթացն առավելագույնս համապատասխանեցնել կոնկրետ դասարանի սովորողների տարիքային առանձնահատկություններին: Այս հարցն առանձնապես կարևորվում է այն դասարաններում, որտեղ կան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներ:

Հետազոտության նպատակի և խնդիրների սահմանում: Հետազոտության հիմնական նպատակն է կատարել ուսուցչի և սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների համագործակցության ուսումնասիրություն՝ սովորողների կրթության և ընտանեկան դաստիարակության արդյունավետության բարձրացման նպատակով:

Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել կրտսեր դպրոցական տարիքի առանձնահատկությունները սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հիմք,

- դիտարկել ուսուցչի և կրտսեր դպրոցական տարիքի սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիների հնարավոր համագործակցությունը ,

- մեկնաբանել «Շախմատ» առարկայի կարևորությունը, դերը սովորողի կյանքում,

- ներկայացնել ուսուցչի և սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիների համագործակցությունը «Շախմատ» առարկայի դասավանդման ընթացքում:

Հետազոտության խնդիրները լուծելու նպատակով ուսումնասիրություններ կատարելու ընթացքում կիրառվել են հետևյալ գիտահետազոտական մեթոդները.

- վերլուծվել և ընդհանրացվել են ուսուցչի և սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիների համագործակցության

հասկացության, նպատակների վերաբերյալ մասնագիտական աղբյուրները,

- ուսումնասիրվել են «Շախմատ» առարկայի դասագրքերը, մեթոդական ուղեցույցները,
- առաջ են քաշվել այն հնարավոր արդյունքները, որոնց հնարավոր կլինի հասնել նշված գործընթացների արդյունավետ կազմակերպման միջոցով:

Հետազոտության օբյեկտի և առարկայի սահմանում: Ընդհանուր առմամբ հետազոտության օբյեկտը ուսուցչի և սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիների համագործակցությունն է, իսկ առարկան՝ «Շախմատ» առարկայի դասավանդման ընթացքում այդ համագործակցության ապահովված արդյունքները:

Հետազոտության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, ընդհանուր մասից, որը բովանդակում է 2 գլուխ, որոնցից յուրաքանչյուրը բովանդակում է երկուական ենթահարց, եզրակացությունից և առաջարկությունների մասից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի ծավալը կազմում է 22 համակարգչային էջ (ներառյալ տիտղոսաթերթը, բովանդակությունը և գրականության ցանկը):

ԳԼՈՒԽ 1. ՈՒՍՈՒՑՉԻ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1. Կրտսեր դպրոցական տարիքի առանձնահատկությունները սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հիմք

Կրթության կազմակերպումը և ընտանեկան դաստիարակությունն իրականացվում են սովորողների տարիքային առանձնահատկությունների հաշվի առնման միջոցով: Մենք գործ ունենք կրտսեր դպրոցական տարիքի սովորողների հետ,

որը համապատասխանում է դպրոցական 1-4-րդ դասարաններին: Յուրաքանչյուր մանկավարժ իր գործունեության ընթացքում հանդիպում է աշակերտների տարիքային զարգացման օրինաչափությունների ճանաչման և դրանցով առաջնորդման խնդրին, ինչը կարող է նպաստել ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը:

Կրտսեր դպրոցական տարիքը անձի կայացման կարևորագույն փուլերից մեկն է, որի ընթացքում տեղի է ունենում անհոգ մանկությունից անցում այնպիսի մի շրջանի, երբ անհրաժեշտություն է ծագում պատասխանատու լինել, տարբեր պահանջմունքներ իրականացնել: Այս շրջանում հակասության մեջ են մտնում երկու հիմնական դրդապատճառ՝ անհրաժեշտության և ցանկության: Մի կողմից, առաջնորդվելով անհրաժեշտության պահանջմունքով, երեխան բացահայտում է հասուն կյանքը, իսկ մյուս կողմից, դրդված լինելով ցանկության պահանջմունքով, երեխան ցուցաբերում է այնպիսի վարք, որը վերադարձնում է իրեն մանկության աշխարհ, որտեղ ինքն ապահով է, ծանոթ, իրականանալի, չկան որոշակի պարտականություններ և պահանջմունքներ [1]: Մի կողմից, երեխան անհանգիստ է, իսկ մյուս կողմից, քանի որ նրա մոտ արդեն ձևավորվում է պահանջմունքների նոր մակարդակ, նա սկսում է գործել, առաջնորդվելով որոշակի նպատակներով, արժեքներով, զգացմունքներով: Կրտսեր դպրոցականի զարգացման ընթացքում հստակ երևում են զարգացման որակական փոփոխություններ:

Այս տարիքի երեխայի զարգացման հիմնական բնութագրերից է այն, որ թեև կտրուկ փոխվում է գործունեության հիմնական ձևը, դեռևս պահպանվում է խաղալու պահանջմունքը: Այդ իսկ պատճառով դպրոցական կյանքի սկզբնական շրջանում չափազանց կարևոր է ուսումնական գործընթացում խաղային տարրերի առկայությունը, ինչը մեծացնում է երեխայի հետաքրքրությունը ուսման հանդեպ: Մեծ է նաև շարժման մեջ գտնվելու պահանջմունքը, հետևաբար, մանկավարժը ուսումնական գործընթացը կազմակերպելիս պետք է կիրառի շարժողական խաղեր, որոնք նպաստում են երեխայի ուշադրության զարգացմանը, կենտրանանալու կարողությանը: Մանկավարժը նաև կարող է հմտորեն կազմակերպել Կրտսեր դպրոցականների հանգիստը՝ ներառելով խաղեր և շարժողական վարժություններ, որոնց ընթացքում երեխան լիցքաթափվում է և կարողանում արդյունավետ շարունակել ուսումը:

[1] Яхьяева А. Х. Младший школьный возраст: психолого-педагогические условия развития интеллектуальных способностей. Вестник Чувашского государственного педагогического университета им. И. Я. Яковлева. 2018. № 4. С. 306–311.

Ողջ համակարգում կարևոր դեր են խաղում սոցիալական դրդապատճառների ձևավորումը, որը ի հայտ է գալիս 2-3 դասարաններում: Աշակերտի համար կարևորվում են մանկավարժի գովասանքը, գնահատականը, ավելի ուշ հասակակիցների կարծիքը իր անձի վերաբերյալ: Այս ամենը նպաստում է երեխայի կողմից սոցիալական իր նոր դերերի գիտակցմանը, իր Ես-ի ինքնահաստատմանը: Երեխայի դրդապատճառների առաջացման, հետաքրքրության պահպանման, Ես-ի ինքնահաստատման գործընթացում չափազանց կարևորվում է մանկավարժի դերը[2]:

Կրտսեր դպրոցականի մոտ առաջնային են նաև բարոյական դրդապատճառների ձևավորումը, ինչում կարևոր դեր են խաղում իդեալների ձևավորումը, որոնք կրում են շատ հստակ բնույթ /հիմնականում տարբեր գրքային կամ հեռուստատեսային հերոսներ/, փոփոխական են և ազդում են իրենց արտաքին կողմերով:

Կրտսեր դպրոցի առաջին տարիներին մանկավարժը երեխայի համար միակ և անկոտրում հեղինակությունն է: Աշակերտի շփումը հիմնականում ուղղված է նրան, համադասարանցիներին նա ընդունում է մանկավարժի միջոցով, արժևորում է այն համադասարանցիներին, ում գնահատում է մանկավարժը: Այդ պատճառով, մանկավարժը որպես հեղինակություն կարող է ուղղորդել երեխայի հասարակական շփումները: Հետզհետե մեծանում է հասակակիցների հետ շփվելու պահանջմունքը, որի բավարարման ընթացքում երեխան սկսում է հասկանալ առկա կանոնները, միջանձնային շփման նրբությունները[3]:

Կրտսեր դպրոցական տարիքի հիմնական նորագոյացություններից է գործողությունների կամածինության զարգացումը, որը բավական երկարատև գործընթաց է և սկսվում է ուսումնական գործունեության ընթացքում: Ձևավորվում է կամքը, որը անընդհատ գործընթաց է, քանի որ ուսումնական գործունեության ողջ ընթացքում երեխայի առջև դրվում են նորանոր նպատակներ: Սկզբնական շրջանում կամքի ձևավորումը մեծապես պայմանավորված է արտաքին պայմաններով՝ պահանջմունքներ ով, ցուցումներով, օրինակներով, սակայն զարգացման ընթացքում երեխան սկսում է առաջնորդվելով սեփական պահանջմունքներ ով, ցանկություններով,

[2] Овчинникова М.О., Лодкина Е.В. Изучение уровня развития духовно-нравственных качеств у младших школьников: Международный научный журнал «ВЕСТНИК НАУКИ» № 10 (67) Том 2. ОКТЯБРЬ 2023., с. 92-94.

[3] Алешина А.В. Эмоциональный интеллект для достижения успеха / А.В. Алешина, С.Т. Шабанов. - Санкт-Петербург: Речь, 2012. - 336 с., с. 49.

ձգտումներով: Կարևորագույն բնութագրերից է ինքնուրույնությունը, որին դրդում են մեծահասակները:

Ուսումնական գործունեության համար կարևոր ճանաչողական գործընթացներից է հիշողությունը: Աշակերտին անհրաժեշտ է մտապահել մեծ քանակությամբ ինֆորմացիա և վերարտադրել այն: Չտիրապետելով հատուկ հմտությունների, երեխան հիշում է մեխանիկորեն, սակայն մեծ քանակի նյութի մտապահման դեպքում հետզհետե դժվարանում է: Մանկավարժը օգնում է երեխային կիրառել մտապահման որոշակի հմտություններ՝ իմաստավորված մտապահում /իմաստային տարրերի բաժանում, իմաստային խմբավորում, համեմատություն և այլն/ և վերարտադրման հնարներ: Երեխան սկզբնական փուլում դժվարանում է մտապահվող նյութի մեջ իմաստային տարրեր առանձնացնել, ինչը անհրաժեշտ է հմտացնել սկսած տարբեր նկարների և փոքր տեքստերի մտապահումից[4]:

Ուսումնական գործընթացը, գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձեռքբերումը ենթադրում է աշակերտի ինքնակառավարում, ինչը հնարավոր է իրականացնել լավ զարգացած կամածին ուշադրության դեպքում: Ուսման սկզբնական շրջանում երեխայի գրավում է երևույթների միայն արտաքին կողմը, իսկ մանկավարժի դերը կայանում է նրանում, որ պարբերաբար սովորեցնի դիտողականությանը, երևույթների էության ըմբռնմանը, հասկացմանը և այլն: Նպատակահարմար է, օրինակ, խնդրել երեխային ստուգել իր ընկերոջ կամ իր գրածը, համեմատել սկզբնական նյութի հետ, զննել և մտապահել առարկաների կարևոր բնութագրերը և այլն:

Կրտսեր դպրոցական տարիքում ինտենսիվ զարգանում և հարստանում է երեխայի խոսքը: Մանկավարժը կարող է օժանդակել այս գործընթացին՝ ապահովելով հարուստ խոսքային միջավայր /գրքերի ընթերցում, ֆիլմերի դիտում, խոսքի ունկնդրում/; ստեղծելով դասաժամերին արտահայտվելու և շփվելու հնարավորություններ; ձևավորելով բավարար բառապաշար; ձևավորելով գեղեցիկ խոսք կիրառելու պահանջմունք և այլ: Այս տարիքում նաև ձևավորվում է գրավոր խոսքը, որը բավականաչափ ծանր, երկարատև և կամային ճիգեր պահանջող գործունեություն է[5]:

---

[4] Федосеева В.А. Развитие учебной мотивации у мальчиков младшего школьного возраста: дипл. работа / Федосеева Владислава Андреевна. Архангельск, 2023. 60 с., с. 18.

[5] Акопова, М.А. Психолого-педагогические технологии в подготовке педагогов начального образования / М.А. Акопова, Д.В. Фурсова, Д.А. Оганнисян. — Москва: ООО «Издательство «Спутник+», 2021. — 178 с., с. 29.

Այսպիսով, կարելի է փաստել, որ կրտսեր դպրոցական տարիքում երեխաները ունենում են հետևյալ ձեռքբերումները՝

- ճանաչողական ոլորտի զարգացում
- հուզական-պահանջմունքային նոր մակարդակի ձևավորում, ինչը թույլ է տալիս գործել ոչ թե անմիջականորեն, այլ առաջնորդվելով հստակ գիտակցված նպատակներով, բարոյական նորմերով և արժեքներով;
- հարաբերականորեն կայուն վարքաձևերի ձևավորում
- երեխայի սոցիալական ուղղվածության զարգացում:

1.2. Ուսուցչի և կրտսեր դպրոցական տարիքի սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիների հնարավոր համագործակցությունը

Ուսուցչի և սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների համագործակցությունը կախված է սովորողի տարիքային առանձնահատկություններից: Այս տարիքում այդ համագործակցությունն առավել սերտ է, քանի որ ուսուցչի և սովորողի համագործակցությունը չի կարող լիարժեք լինել: Ուսուցիչների և սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների համագործակցությունը կարևոր է երեխայի կրթության բոլոր փուլերում, սակայն այն առանձնահատուկ նշանակություն և արդիականություն է ստանում տարրական դասարաններում ստանալու ժամանակ: Հենց այս ժամանակահատվածում է, որ երեխայի կապն իր ընտանիքի հետ դեռ շատ ամուր է, և ծնողական իշխանությունն ազդում է տարրական դպրոցի աշակերտի մոտիվացիոն ոլորտի վրա: Մեր օրերում ուսուցիչները և կրտսեր դպրոցի աշակերտի ընտանիքը պետք է հասկանան, որ դպրոցը կրթական տարածք է, որը կարող է ապահովել երեխայի համակողմանի զարգացումը՝ ուսումնական գործընթացի բոլոր առարկաների փոխըմբռնման և փոխազդեցության համատեքստում: Առաջին հերթին ուսուցիչները և կրտսեր դպրոցական տարիքի սովորողի ծնողները կամ օրինական ներկայացուցիչները համագործակցում են դպրոցական միջավայրին սովորողի հարմարվելու համատեքստում: Համագործակցությունը ոչ թե պարզապես գոյակցող օբյեկտների միջև կապ է, այլ

առաջին հերթին կապ, որը որոշում է ուսումնական գործընթացում այս կամ այն կերպ ներգրավված սուբյեկտների գաղափարների փոխանցումը, փոխակերպելիությունը:[6]

Մի խումբ գիտնականներ՝ Վ.Ի. Զագվյազինսկու գլխավորությամբ գտնում են, որ ուսուցչի և սովորողի ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների համագործակցությունը մանկավարժական փոխազդեցության ձև է և ենթադրում է ուսուցչի և սովորողի ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների անձնական շփում, որի արդյունքում տեղի են ունենում փոխադարձ փոփոխություններ ինչպես սովորողի, այնպես էլ ուսուցչի և նրանց ծնողների կամ օրինական ներկայացուցիչների վարքագծի, գործունեության, հարաբերությունների և վերաբերմունքի մեջ[7]:

Ուսուցչի և կրտսեր դպրոցական տարիքի սովորողի ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների համագործակցությունը սկսվում է սովորողի՝ դպրոց մուտք գործելուց: Համագործակցության առաջին աստիճանը սովորողների հարմարվելն է դպրոցին, նոր միջավայրին: Ապա համագործակցությունն ուղղվում է սովորողների կրթության կազմակերպմանը և ընտանեկան դաստիարակության մոդելների փոխհամաձայնեցվածությանը: Սովորողների կրթության կազմակրպման համատեքստում ուսուցիչները և սովորողների ծնողները կամ օրինական ներկայացուցիչները համագործակցում են որպեսզի կարողանան տվյալ դասարանի սովորողների անհատական առանձնահատկություններին համապատասխան կազմակերպել ուսումնական գործընթացը, իսկ ընտանեկան դաստիարակության մոդելները պետք է շաղկապված լինեն դպրոցական դաստաիարակության մոդելներին:

Մենք մշակել ենք ուսուցիչների և սովորողների ծնողների կամ օրինական ներկայացուցիչների արդյունավետ համագործակցության մի շարք դրույթներ, որոնց կատարումը դրական ազդեցություն կունենա սովորողների ուսումնական գործունեության արդյունքների վրա.

• սովորողների ծնողներին կամ նրանց օրինական ներկայացուցիչներին կրթել, վերապատրաստել երեխաների տարիքային առանձնահատկությունների, այդ տարիքին բնութագրական ուսումնական կարողունակությունների, դրանց համատեքստում ընտանեկան դաստիարակության կազմակերպման հարցերով,

---

[6] Чурсина В. Н. Современная модель российской семьи: особенности социально-психологической адаптации [Текст] / В. Н. Чурсина // Научные ведомости БелГУ. Серия : Гуманитарные науки. – 2014. – № 6 (177). – С.300-307.

[7] Педагогический словарь [Текст] : Учебное пособие для студ. высш. учеб. заведений / Под ред. В. И. Загвязинского, А.Ф. Закировой. – М. : Академия, 2008. – 352с., с. 57.

• օգնություն ցուցաբերել դրական և բացասական իրավիճակները հասկանալու և օբյեկտիվ գնահատական տալու համար.

• սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների մոտ ճիշտ պատկերացումներ ձևավորել երեխայի դաստիարակության գործում իրենց դերի, դպրոցի և ուսումնական գործընթացին մասնակցելու անհրաժեշտության մասին.

• սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների մոտ ձևավորել սուբյեկտիվ դիրք դպրոցի և դասարանի աշխատանքում՝ ընտանիքների և երեխաների հետ տարատեսակ աշխատանքներ իրականացնելիս.

• սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների մոտ ձևավորել հոգեբանական և մանկավարժական մշակույթ.

• սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների և սովորողների միջև ձևավորել հարգանքի և վստահության հարաբերություններ:

Մեր մշակած բոլոր դրույթները ցույց են տալիս, որ տարրական կրթության փուլում կրտսեր դպրոցականի անհատական ձևավորումը տեղի է ունենում կրթության երկու սուբյեկտների արդյունավետ փոխազդեցությամբ՝ առաջնային սուբյեկտն ընտանիքն է, իսկ երկրորդայինը՝ դպրոցը: Նրանց համագործակցության հիմնական պայմանը սովորողների տարիքային առանձնահատկությունների, կրթական գործընթացի առարկաների ուսումնական առաջադրանքների և բովանդակային ուղղությունների իմացությունն է, որպեսզի նրանք կարողանան արդյունավետորեն կապ պահպանել: Ուսուցիչների, կրտսեր դպրոցականների և նրանց ծնողների կամ օրինական ներկայացուցիչների միջև հաջող փոխգործակցության գրավականը կլինի համատեղ գործունեության, հավասարության և փոխադարձ հարգանքի հարթակի ստեղծումը:

ԳԼՈՒԽ 2. ՈՒՍՈՒՑՉԻ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ (ԿԱՄ ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ) ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ «ՇԱԽՄԱՏ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

2.1. «Շախմատ» առարկայի կարևորության գիտակցումը, դերը սովորողի կյանքում

Ուսուցիչների և սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների արդյունավետ համագործակցությունը ենթադրում է, առաջին հերթին, նրանց մոտ «Շախմատ» առարկայի կարևորության գիտակցման ձևավորում: Ծնողները մինչ չընկալեն թե ինչ դեր ունի և ինչ կարող է փոխել առարկան իրենց սովորողների կյանքում լուրջ վերաբերմունք չեն ձևավորի առարկայի նկատմամբ: Փաստենք, որ հանրակրթության ժամանակակից հայեցակարգի հիմքը երեխայի անձի զարգացման, ստեղծագործական ընդունակությունների ձևավորման, անձնային որակների դաստիարակության գաղափարն է: Շախմատային դասընթացի առկայությունը ուսումնական գործընթացում նպաստում է այդ ամենին: Շախմատը էական դաստաիարակչական դեր է խաղում և սովորեցնում է երեխային յուրաքանչյուր

որոշման կայացումից առաջ կշռադատել այն, վերլուծել և ենթադրել իր քայլերին հաջորդող իրավիճակը[8]:

Շախմատային գործունեությունը բոլոր իմացական գործընթացներից ամենաշատը մտածողության զարգացմանն է նպաստում: Այստեղ առկա են մտածական բոլոր գործառույթները՝ վերլուծություն, համադրություն, համեմատություն, ընդհանրացում, կոնկրետացում, վերացարկում: Շախմատի դասավանդման ընթացքում ձևավորվում և զարգանում մտքի որակները՝ մտածողության ինքնուրույնությունը, ճկունությունը, արագությունը, խորությունը, լայնությունը, նպատակաուղղվածությունը, քննադատականությունը, կոմպլեքային բնույթը, մտքի ինտուիտիվ և տնտեսող բնույթը:

Շախմատային խաղում երեխայի մոտ ձևավորվում է գործողությունների ներքին պլան: Տիրապետելով այդ ամենին՝ երեխան կարողանում է ըստ պատշաճի պլանավորել իր ժամանակը, մտածելու մարտավարությունը և հասնել նպատակադրումներին: Կրտսեր դասարաններում երեխաները հաճախ են բախվում այնպիսի խնդիրների, որոնց լուծումը պահանջում է վերը նշված հմտության առկայություն[9]:

Շախմատի հանրակրթական դասարանների դասագրքերում չկա կաղապարված մտածելաձև, և աշակերտին տրված է ազատություն՝ ինքնուրույն գտնելու առաջադրանքների պատասխանները: Այս իմաստով՝ ազատ մտածելու տեսանկյունից, կարևոր է այն, որ մարզիչը, իսկ հանրակրթական դպրոցում ուսուցիչը, այսպես ասած, իմանա իր չափը և չզրկի աշակերտին յուրովի մտածելու և առաջադրված խնդրի պատասխանը ինքնուրույն գտնելու հնարավորությունից: Շախմատի 2-4-րդ դասարանի դասագրքերը միտված է հենց այսպիսի մոտեցում կիրառելուն: Այն փորձում է երեխայի ենթագիտակցության մեջ ներդնել նաև իրավիճակը իր կողմից կառավարելի պահելու հատկությունը և զարգացնում է նրա ինքնուրույն մտածելաձևը[10]:

Ինչպես նշեցինք, շախմատը, որպես խնդիրներ ստեղծելու գործիք, ունի ստեղծագործական մտածելակերպ զարգացնելու հատկություն և որպես

---

[8] Агузумцян Р. В., Погосян С. Г., Психологические проблемы школьного шахматного образования, Материалы Международной научно-практической конференции <<Шахматное образование-важный ресурс мировой системы образования>>. Ханты-Мансийск, 10-13 июня 2013г.: Сборник тезисов докладов/Составители: И.Г. Сухин, Г. В. Ковалева; научный редактор И.Г. Сухин.-Обнинск: Духовное возрождение, 2013.-416 с., с. 264-270

[9] Погосян С. Г., Агузумцян Р. В., Влияние шахмат на развитие креативности и интеллекта в младшем школьном возрасте. Армянский журнал психического здоровья. Том 2, Ереван, 2013, с. 26-30

[10] Մարտիրոսյան Լ., Միսակյան Ս., Մովսիսյան Ն. Շախմատ: Դասագիրք 2-րդ դասարանի համար /Լ. Մարտիրոսյան, Ս. Միսակյան, Ն. Մովսիսյան.- Եր.: Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամ, 2023.- 116 էջ, Թումանյան Հ.Տ. Շախմատ: Դասագիրք 3-րդ դասարանի համար /Հայաստանի ազգային ակադեմիա, Մասն.խմբագիր Գ.Մ.Մինասյան.- Եր.: Զանգակ, 2012.- 100 էջ, Թումանյան Հ.Տ. Շախմատ: Դասագիրք 4-րդ դասարանի համար /Հայաստանի շախմատի ակադեմիա, Մասն.խմբագիր Գ.Մ.Մինասյան.- Եր.: Զանգակ, 2019.- 96 էջ

հանրակրթական առարկա՝ այս տեսանկյունից եզակի է: Այդ հատկության շնորհիվ շախմատը հնարավորություն է ստեղծում երեխային առաջադրել խնդիրներ, որոնք պահանջում են գտնել ոչ ուղղակի պատասխաններ և ըստ այդմ էլ երեխայի մոտ զարգանում է ինքնատիպ և բազմավեկտոր մտածողություն: Շախմատն ուսումնասիրելիս աշակերտի առջև հնարավորություն է բացվում խնդրի լուծման ժամանակ անսահմանափակ քանակով տարբերակների մշակման համար: Շախմատի միջոցով մարզվում է աշակերտի կարճ հիշողությունը, ինչն իր հերթին նպաստում է նաև աշակերտի ակտիվ հիշողության զարգացմանը: Այս համատեքստում կարևոր է շեշտել նաև այն, որ շախմատը բարերար ազդեցություն է ունենում այն երեխաների զարգացման վրա, որոնք հիպերակտիվ են կամ, ընդհակառակը, պասիվ են կամ ունեն կենտրոնացման հետ կապված խնդիրներ: Ինչպես արդեն նշեցինք, ապացուցված է նաև այն, որ շախմատը դրական է ազդում երեխայի մոտ ուղեղի աջ և ձախ կիսագնդերի համագործակցային գործունեության զարգացման վրա:

Շախմատի 2-4-րդ դասարանների դասագրքում ընդգրկված խնդիրները պահանջում են աշակերտներից ոչ ստանդարտ մտածելակերպ դրսևորել՝ գտնելու առաջադրված խնդիրների բանալիները: Բացի վերոնշյալից, առարկայի ուսումնառությանը զուգընթաց, երեխայի մոտ տեղի է ունենում բնավորության որոշակի գծերի ձևավորում: Օրինակ՝ մարդկային հոգեբանությանը բնորոշ է կյանքի որոշակի բարդ իրավիճակներում խնդիրները լուծել՝ դրանք շրջանցելով, իսկ շախմատային մտածողությունը ձևավորում է կամք՝ խորանալու ստեղծված իրավիճակի մեջ և խնդիրը հաղթահարել ոչ թե այն շրջանցելով, այլ լուծում տալով: Այս տեսանկյունից կարևոր է անդրադառնալ նաև այն բանին, որ շախմատը սովորեցնում է մտածել դիմացինի մասին ևս՝ միաժամանակ հաշվարկելով նրա հնարավոր քայլերը: Դա վառ կերպով դրսևորվում է այնպիսի շախմատային իրավիճակներում, ինչպիսիք են պատից խուսափումը, ցուգցվանգի մոտեցումը կամ մատ երկու քայլից՝ ցուգցվանգի միջոցով դիրքը: Այդ դեպքերում շախմատ խաղացողը պարտավոր է մտածել նաև հակառակորդի մասին:

Դասագրքերում բացառված է կաղապարված մտածելաձևի կիրառումը և դրա դրսևորումներից է այն, որ գրքում շատ հաճախ առաջադրանքի պատասխանը տրված է խնդրի կողքին, ապա խնդրի որոշակի դետալի փոփոխությամբ աշակերտի առջև մի նոր առաջադրանք է դրված, ինչն էլ հնարավորություն է տալիս արդեն տրված

պատասխանի վերլուծության միջոցով գտնել խնդրի պատասխանը՝ համադրելով տրամաբանական ու վերլուծական մտածողությունը:

Դասագրքերը մշակված են այնպես, որ առաջադրանքները աստիճանաբար բարդանում են և մատային դիրքերի ուսուցումը սկսվում է ամենապարզ՝ մատ՝ մեկ քայլից դիրքի և դրա վերաբերյալ խնդիրների ուսուցումից: Երեխային առաջադրվող յուրաքանչյուր խնդիր, լինելով միաժամանակ ավարտուն, միշտ հնարավորություն է ենթադրում այն առավել զարգացնելու և հաջորդ դասի ուսուցմանը զուգընթաց երեխային ավելի բարդ խնդիր առաջադրելու համար: Փորձը ցույց է տալիս, որ մանուկ հասակից շախմատի ուսուցումը այս սկզբունքների համաձայն կարող է իր դրական ազդեցությունն ունենալ երեխայի համար արդեն հասուն տարիքում իր առջև առաջադրված խնդիրները ճիշտ լուծելու համար՝ օգտագործելով սեփական քննադատական մտածելակերպը:

Հարկ է նշել, որ իր առջև խնդիր դնելով զարգացնել շախմատ ուսումնասիրող երեխաների մտածողությունը, շախմատի հանրակրթական 2-4-րդ դասարանի դասագրքերը նաև նպաստում են շախմատային օժտվածությամբ երեխաների բացահայտմանը, ովքեր մինչև դպրոցում սովորելը շախմատի հետ առնչվելու հնարավորություն չեն ունեցել: Այսպիսով, հենց այս մեթոդների համադրման արդյունքում մշակված 2-4-րդ դասարանի դասագրքերը թույլ են տալիս աշակերտների մոտ սեր և հետաքրքրություն առաջացնել շախմատի նկատմամբ:

2.2. Ուսուցչի և սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիների համագործակցությունը «Շախմատ» առարկայի դասավանդման ընթացքում

Ուսուցչի և սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիների համագործակցությունը «Շախմատ» առարկայի դասավանդման ընթացքում պետք է կազմակերպվի առաջին հերթին սովորողների կրթության կազմակերպումն առարկայական չափորոշչին համապատասխան իրականացնելու համատեքստում:

Առարկայական չափորոշիչը սահմանում է, որ «Շախմատ» առարկայի ուսուցման նպատակն է տարրական դպրոցի սովորողների մոտ խթանել որոնողական գործունեությունը՝ ուղղված փոփոխվող շախմատային իրավիճակներում կողմնորոշվելուն, շախմատային խնդիրների լուծման տարբերակներ գտնելուն,

սովորողների կոնվերգենտ և դիվերգենտ, քննադատական և ստեղծագործական մտածողությունը զարգացնելուն: Առարկայական չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին կարելի է ծանոթանալ ստորև ներկայացված հղմամբ[11]: Այդ վերջնարդյունքների ապահովումը, մասնավորապես, 2-րդ դասարանում, որն առարկայի դասավանդման հիմքն է, անհնար է առանց ուսուցիչների և սովորողների ծնողների կամ օրինական ներկայացուցիչների հետ համագործակցության:

«Շախմատ» առարկայի շրջանակներում ուսուցչի և սովորողների ծնողների կամ օրինական ներկայացուցիչների միջև համագործակցության հիմքը դնելու համար ուսուցիչը ծնողական ժողովի կամ անհատական հանդիպումների միջոցով ծանոթանում է սովորողների տարիքային առանձնահատկություններին, ծնողների՝ իրենց երեխաների մասին ներկայացրած տեղեկատվության հիմքով կազմում է սովորողների վերաբերյալ անհատական քարտեր, որոնց հիմքով էլ մշակելու է նրանց հետ աշխատանքային մոտեցումներ: Ապա ուսուցիչը բանավոր հարցում է անցկացնում սովորողների ծնողներին կամ օրինական ներկայացուցիչների շրջանում, պարզելու համար, թե ինչպիսի՞ պատկերացումներ ունեն նրանք «Շախմատ» առարկայի դասավանդման կարևորության մասին: Լսելով կարծիքներ՝ ուսուցիչը ծնողներին կամ օրինական ներկայացուցիչներին ներկայացնում է առարկայական չափորոշչով սահմանված վերջնարդյունքները և ընդգծում, թե այդ վերջնարդյունքները ինչ դրական ազդեցություն կարող են թողնել սովորողի վրա:

Ուսուցիչը, մասնավորապես, շեշտադրում է, որ շախմատ ուսումնական առարկան նպաստում է սովորողների ինտելեկտի զարգացմանը՝ առավելապես կարևորում ենք շախմատի դերը մտածողության ձևավորման գործընթացում: «Շախմատ» ուսումնական առարկան զարգացնում է կոնվերգենտ ու դիվերգենտ մտածողության ձևերը: Այն հնարավորություն է տալիս մտածելու մի քանի հնարավոր քայլերի մասին, գնահատելու դրանք և ընտրելու լավագույնը: «Շախմատ» առարկան նպաստում է սովորողների մոտ վերլուծական և քննադատական, ստեղծագործական և այլընտրանքային մտածողության ձևերի զարգացմանը, կանխատեսելու կարողության, իրավիճակների ընթացքի վրա ազդելու ունակության ձևավորմանն ու զարգացմանը,

[11] Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Շախմատ» առարկայի 2-4-րդ դասարանների առարկայական չափորոշիչը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 30 մարտի 2023 թ. N 37-Ն հրամանը. Հասանելիությունը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176077 (Վերջին մուտքը՝ 29.09.2023., ժամը 15:19)

երևակայության և ստեղծագործականության միջոցով սովորելու կարողության խթանմանն ու կրթության արժևորմանը: «Շախմատ» ուսումնական առարկայի յուրացման ընթացքում զարգանում են սովորողների մտավոր գործողությունների ներքին պլանավորման, բարդ իրավիճակներում որոշումների ընդունման, ինքնավերլուծության կարողությունները, հուզական ինտելեկտը, ինչպես նաև վարքի ինքնակազմակերպումը, կարգապահությունը և պատասխանատվությունը: «Շախմատ» առարկայի դասավանդման հիմնական սկզբունքներն են շախմատային կրթության հասանելիության ապահովումը, առարկայի ուսուցմանը սովորողների ակտիվ մասնակցությունը, առարկայի ուսուցման գործնական ուղղվածությունը: Սա թույլ է տալիս փոխել պատկերացումները «Շախմատ» առարկայի կարևորության մասին:

«Շախմատ» առարկայի շրջանակներում ուսուցչի և սովորողների ծնողների կամ օրինական ներկայացուցիչների միջև համագործակցության արդյունքում ուսուցիչը կկարողանա բացահայտել դասագրքի բարդության աստիճանը, երեխայի առջև ծառացած խնդիրները: Ծնողները պիտի կարողանան սեր արթնացնել առարկայի նկատմամբ, զարգացնել երեխայի մտածողությունը: Այս ամենի ճիշտ կազմակերպման համար անհրաժեշտ է ծնողի, ուսուցչի համատեղ աշխատանքն ու վերահսկողությունը: Համագործակցության արդյունավետության համար նախ պետք է պարզել, թե հենց ծնողները որքա՞ն են տիրապետում շախմատին:

Մանկավարժները պետք է խրախուսեն սովորողների ծնողներին կամ նրանց օրինական ներկայացուցիչներին, նրանց տեղեկացնեն, թե ի՞նչ է կատարվում երեխայի կյանքում, խոսեն այն ընթացիկ գործընթացների մասին, որոնք կարող են ազդեցություն գործել դպրոցում երեխայի առաջընթացի վրա:

Դպրոցները, որոնք հոգ են տանում սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների՝ դպրոցի ուսումնական գործընթացում ընդգրկվելուն, ակտիվորեն օգնում են ծնողին ընդգրկման մեթոդները սովորելու գործում: Երեխաներից շատերը դպրոցից դուրս մասնակցում են շախմատի արտադպրոցական պարապմունքների: Նրանց մեջ ոգևորություն արթնացնելու համար կարելի է կազմակերպել փոքրիկ մրցույթներ: Սա կարելի է կատարել սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների անմիջական մասնակցությամբ և օգնությամբ: Նման միջոցառումները ոգեշնչում են շնորհալի մասնակիցներին, բացահայտում են նոր շնորհալիներին, նպաստում նոր աշխատանքների ստեղծմանը:

Այդպիսի միջոցառումները ձևավորում են գնահատման և ինքնագնահատման որակներ և կերտում հասարակության հետ սերտ շփվող, մտածող անհատներ: Սովորողների ծնողներին կամ նրանց օրինական ներկայացուցիչներին երեխաների հետ կարելի է ներգրավել շախմատի խաղի ընթացքին:

«Շախմատ» առարկայի շրջանակներում ուսուցչի և սովորողների ծնողների կամ օրինական ներկայացուցիչների միջև համագործակցությունը կարևոր է թե՛ դպրոցի, թե՛ շախմատի ուսուցման արյունավետության բարձրացման համար ընդհանրապես: Դրա համար կարելի է կազմակերպել ծնողական ժողովներ և հանդիպումներ ոչ միայն դպրոցում, նաև դպրոցից դուրս: Նման հանդիպումների անցկացումը կնպաստի սովորողների ծնողների կամ օրինական ներկայացուցիչների և դպրոցի միջև լարվածության վերացմանը, փոխադարձ վստահության ձեռքբերմանը:

Դպրոցում սովորողների ծնողների կամ օրինական ներկայացուցիչների հետ ջերմ և կառուցողական միջավայրի ստեղծման համար կարևոր է դպրոցի աշխատակիցների համապատասխան վերաբերմունքը նրանց հանդեպ: Սովորողների ծնողների կամ օրինական ներկայացուցիչների միջև համագործակցության հետ ճիշտ ձևով հանդիպումը կարևոր է: Սովորողների ծնողների կամ օրինական ներկայացուցիչների հետ խոսելիս դպրոցի ներկայացուցիչները պետք է լինեն բաց և դրականորեն տրամադրված, որը կնպաստի ուսուցչի և սովորողների ծնողների կամ օրինական ներկայացուցիչների միջև սերտ համագործակցությանը, կձևավորի այն գիտակցական մակարդակը, որ ծնողը դպրոցական հանրույթի լիիրավ և գնահատված անդամ է:

Սովորողների որոշ ծնողներ կամ օրինական ներկայացուցիչներ ունեն որոշակի մասնագիտական որակավորում և կրթություն, ինչը համագործակցության արդյունքում կարելի է օգտագործել աշակերտի հետ աշխատելիս: Սակայն դրա համար պետք է ուսուցիչն անձամբ լինի նախաձեռնող՝ որպես դպրոցական գործընթացի կազմակերպիչ: Այս առումով ուսուցիչը կարող է նախագծային աշխատանքներ կազմակերպել՝ ներգրավելով պատրաստակամ ծնողներին, ուղղորդելով նախապես պլանավորված աշխատանքին: Հանդիպում են դեպքեր, երբ ծնողական համայնքում լինում են տարաձայնություններ, չհասկացված հարաբերություններ, ուսուցչի աշխատանքի թերագնահատում, և այս դեպքում արդյունավետ կլինի համագործակցային աշխատանքների մեջ ներառել հենց այդ ծնողներին՝ դարձնելով նրանց ուսուցչի օգնականներ: Փորձը ցույց է տալիս, որ նման աշխատանքներից հետո ծնողներն ավելի

են արժևորում ուսուցչի բարդ աշխատանքը, և ավելի ներդաշնակ են դառնում դասարանի ծնողական համայնքի հարաբերությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով մեր կողմից կատարված տեսամեթոդական ուսումնասիրությունները և գործնական աշխատանքի արդյունքները՝ նշենք, որ կրտսեր դպրոցական տարիքի սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների կապը դպրոցի, ուսուցչի հետ պետք է լինի կայուն և կրի շարունակական բնույթ 1-4-րդ դասարաններում: Ընտանիքն, ի տարբերություն այլ սոցիալական ինստիտուտների, ամենօրյա ազդեցություն ունի երեխայի վրա, հետևաբար ունի գրեթե անսահմանափակ հնարավորություններ նրա անձնական որակները ձևավորելու համար: Սակայն այդ սահմանափական հնարավորությունների ճիշտ ուղղորդված չլինելու դեպքում ընտանեկան դաստիարակությունը չի կարող ապահովել սովորողի ներդաշնակ զարգացման բոլոր պայմանները, հետևաբար պետք է փոխլրացնել դրանք ուսուցիչների և սովորողների ծնողների կամ օրինական ներկայացուցիչների համագործակցության, անհատի զարգացման գործում նրանց ջանքերի միասնականացման միջոցով:

Այն դեպքում, երբ ուսուցիչներին և սովորողների ծնողներին կամ օրինական ներկայացուցիչներին հաջողվել է արդյունավետ համագործակցել, սովորողների համար ստեղծվում են բոլոր պայմանները դասանյութի առավել լավ յուրացման, կարողունակությունների և հմտությունների ձևավորման վրա ժամանակի ծախսի նվազեցման, ճանաչողական ակտիվության և ստեղծագործական ինքնուրույնության ապահովման, դասերից հաճույք ստանալու, դպրոցական միջավայրից չխուսափելու համար: Ուսուցիչների համար հնարավորություն է ստեղծվում ապահովել բարենպաստ և արդյունավետ միջավայր:

Այն դեպքում, երբ ուսուցիչներին և սովորողների ծնողներին կամ օրինական ներկայացուցիչներին հաջողվել է արդյունավետ համագործակցել, ընտանիքներում նվազում են տարաձայնությունները, ընտանիքի անդամները ընդունում և հասկանում են իրենց պարտականությունները և ստանձնում են դերեր, որոնք մինչ այդ չէին կրել, ընտանիքում ստեղծվում է բարենպաստ մթնոլորտ՝ հիմնված փոխօգնության վրա:

Այն դեպքում, երբ ուսուցիչներին և սովորողների ծնողներին կամ օրինական ներկայացուցիչներին հաջողվել է արդյունավետ համագործակցել, ապահովվում են պայմաններ, որոնք թույլ են տալիս սովորողների կրթության և ընտանեկան դաստիարակության հարցերում ընդհանուր կարծիքի գալ, մասնավորապես կրթության համաձայնեցված տեխնիկայի և մեթոդների դիրքերից, որպեսզի բացառվի երեխայի մոտ երկակի վերաբերմունքի ձևավորումը: Ուսուցիչները և սովորողների ծնողները կամ օրինական ներկայացուցիչներն այդպիսով կարողանում են միջոցներ ձեռնարկել սովորողների ուսումնական դժվարությունների հաղթահարման համար: Ձևավորված փոխվստահության պայմաններում ուսուցիչները և սովորողների ծնողները կամ օրինական ներկայացուցիչները կարողանում են ցանկացած փոփոխության վերաբերյալ անկաշկանդ տեղեկացնել միմյանց:

Առաջարկում ենք սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ անցկացնել բացատրական միջոցառումներ, նրանց հետ կազմակերպել շախմատային մրցաշարեր, դուրս բերել այն դժվարությունները, որոնց հանդիպեցին ծնողները կամ օրինական ներկայացուցիչները, կապել դրանք առօրյա կյանքի հետ և վերջում կարճատև զեկուցում ներկայացնել այն մասին, թե որպիսի ազդեցություն կունենա շախմատը իրենց երեխայի կյանքի վրա, եթե նրանք առավել ուշադիր լինեն առարկայի ուսուցման գծով և որպիսի խնդիրներից կձերբազատի սովորողին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մարտիրոսյան Լ., Միսակյան Ս., Մովսիսյան Ն. Շախմատ: Դասագիրք 2-րդ դասարանի համար.- Եր.: ՀՇԱՀ, 2023.- 116 էջ
2. Թումանյան Հ.Տ. Շախմատ: Դասագիրք 3-րդ դասարանի համար /Հայաստանի ազգային ակադեմիա.- Եր.: Զանգակ, 2012.- 100 էջ
3. Թումանյան Հ.Տ. Շախմատ: Դասագիրք 4-րդ դասարանի համար /Հայաստանի շախմատի ակադեմիա.- Եր.: Զանգակ, 2019.- 96 էջ
4. Агузумцян Р. В., Погосян С. Г., Психологические проблемы школьного шахматного образования, Материалы Международной научно-практической конференции <<Шахматное образование-важный ресурс мировой системы образования>>. Ханты-Мансийск, 10-13 июня 2013г.: Сборник тезисов докладов/Составители: И.Г. Сухин, Г. В. Ковалева; научный редактор И.Г. Сухин.-Обнинск: Духовное возрождение, 2013.- 416 с., с. 264-270
5. Акопова, М.А. Психолого-педагогические технологии в подготовке педагогов начального образования / М.А. Акопова, Д.В. Фурсова, Д.А. Оганнисян. — Москва: ООО «Издательство «Спутник+», 2021. — 178 с., с. 29.
6. Алешина А.В. Эмоциональный интеллект для достижения успеха / А.В. Алешина, С.Т. Шабанов. - Санкт-Петербург: Речь, 2012. - 336 с., с. 49.
7. Овчинникова М.О., Лодкина Е.В. Изучение уровня развития духовно-нравственных качеств у младших школьников: Международный научный журнал «ВЕСТНИК НАУКИ» № 10 (67) Том 2. ОКТЯБРЬ 2023., с. 92-94.
8. Педагогический словарь [Текст] : Учебное пособие для студ. высш. учеб. заведений / Под ред. В. И. Загвязинского, А.Ф. Закировой. – М. : Академия, 2008. – 352с., с. 57.
9. Погосян С. Г., Агузумцян Р. В., Влияние шахмат на развитие креативности и интеллекта в младшем школьном возрасте. Армянский журнал психического здоровья. Том 2, Ереван, 2013, с. 26-30
10. Федосеева В.А. Развитие учебной мотивации у мальчиков младшего школьного возраста: дипл. работа / Федосеева Владислава Андреевна. Архангельск, 2023. 60 с., с. 18.
11. Чурсина В. Н. Современная модель российской семьи: особенности социально-психологической адаптации [Текст] / В. Н. Чурсина // Научные ведомости БелГУ. Серия : Гуманитарные науки. – 2014. – № 6 (177). – С.300-307.
12. Яхьяева А. Х. Младший школьный возраст: психолого-педагогические условия развития интеллектуальных способностей. Вестник Чувашского государственного педагогического университета им. И. Я. Яковлева. 2018. № 4. С. 306–311.

Համացանցային աղբյուրներ

13. Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Շախմատ» առարկայի 2-4-րդ դասարանների առարկայական չափորոշիչը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 30 մարտի 2023 թ. N 37-Ն հրամանը. Հասանելիությունը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176077